ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ASSESSMENT AND TESTING CENTER"

STATE NON TRADE ORGANIZATION

ք.Ե Երևան, Չայլախյան 4 | Chaylakhyan str. 4,Yerevar

Հեռ. 57 63 37, | Tel. 57 63 37,

E-mail:info@atc.am

12.12.2025թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2025թ. նոյեմբերի 29-ին կազմակերպված մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների և մանկավարժական աշխատողների «Հոգեբանություն» առարկայի կամավոր ատեստավորման բողոքարկման հանձնաժողովի նիստի որոշման

2025թ . դեկտեմբերի 12-ին կայացավ «Հոգեբանություն» առարկայի բողոքարկման հանձնաժողովի նիստ, հանձնաժողովը քննեց բողոքարկված առաջադրանքները և որոշեց.

1. բոլոր տարբերակների թեստերի 7-րդ առաջադրանքում կա 2 ճիշտ պատասխան (Պրոխազկայից բացի ճիշտ պատասխան է նաև Դեկարտը): Բոլոր ատեստավորվողներին, որոնք որպես ճիշտ պատասխան նշել են թեստ 1-ի 7-րդ առաջադրանքում 3 կամ 4, թեստ 2-ի 7-րդ առաջադրանքում 1 կամ 4, թեստ 3-ի 7-րդ առաջադրանքում 1 կամ 2, թեստ 4-ի 7-րդ առաջադրանքում 2 կամ 3 պատասխանը, տալ միավոր, եթե այդ առաջադրանքից միավոր չեն ստացել:

2. Թեստ 1-ի 39-րդ առաջադրանքում 8-րդ պնդումը, թեստ 2-ի 39-րդ առաջադրանքի 9-րդ պնդումը, թեստ 3-ի 39-րդ առաջադրանքի 1-ին պնդումը, թեստ 4-ի 39-րդ առաջադրանքի 2-րդ պնդումը տպագրվել է հետևյալ ձևով. «հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են»: Պնդման վերջին «հակումներ են» բառի փոխարեն պետք է լիներ «դիրքորոշումներ են»: Վրիպակի պատճառով այս պնդումը սխալ է: Թեստ 1-ի 39-րդ առաջադրանքում ճիշտ պատասխաններ 1,4,9-ից բացի ճիշտ է նաև 8-ը, թեստ 2-ի 39-րդ առաջադրանքում ճիշտ պատասխաններ 1,2,5-ից բացի ճիշտ պատասխան է նաև 9-ը, թեստ 3-ի 39-րդ առաջադրանքում ճիշտ պատասխաններ 2,3,6-ից բացի ճիշտ պատասխան է նաև 1-ը, թեստ 4-ի 39-րդ առաջադրանքի ճիշտ պատասխաններ 3,4,7-ից բացի ճիշտ պատասխան է նաև 2-ը: Նշված 4 ճիշտ պատասխաններից ցանկացած 1-ը, 2-ը կամ 3-ն ընտրածներին տալ մեկական միավոր յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար:

3. Մյուս առաջադրանքների արդյունքները մնում են անփոփոխ:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Հ/Հ	Բովանդակություն	Բողոք	Պատասխան
2.	Ինչպե՞ս է կոչվում այս օրենքը. «Եթե գրգռիչի ուժն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, ապա զգայության ինտենսիվությունն աճում է թվաբանական պրոգրեսիայով»:	2-դ հարցում նշված է << Ինչպես է կոչվում այս օրենքը – Եթե գրգռիչի ուժն աճում է երկրաչափական պրոգրեսիայով , ապա զգայության ինտենսիվությունը աճում է թվաբանական պրոգրեսիայով>> : Ճիշտ պատասխան է համարվել 3-ը՝ Փսիխոֆիզիկայի օրենք , բայց ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Ս. Փիլոսյանի գրքում ՝ 13-րդ էջում սահմանված է հենց հեղինակների անունով՝ Վեբեր-Ֆեխների օրենք , պատասխաններում այն նշվել է որպես փսիխոֆիզիկայի օրենք, որը չի շեշտվել գրականության մեջև ընդունված չէ գիտական հանրույթի կողմից:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 149-րդ էջում հստակ նշված է. «Հետազոտելով գրգռիչների ազդեցության ուժի և զգայությունների ինտենսիվության փոփոխությունների այս կախվածությունը՝ Է. Վեբերը և Գ. Ֆեխները եզրակացրին, որ զգայության ինտենսիվության և գրգռիչի մեծության միջև կապը լոգարիթմական է, այսինքն՝ եթե գրգռիչի ուժն աճում է երկրաչափական պրոգրեսիայով, ապա զգայության ինտենսիվությունն աճում է թվաբանական պրոգրեսիայով: Սա նշանակում է, որ զգայության ինտենսիվության մեկ միավորով մեծանալու համար, անհրաժեշտ է, որ գրգռիչի մեծությունը 10 անգամ ավելանա: Այս օրենքը հայտնի է որպես փսիխոֆիզիկայի հիմական օրենք կամ Վեբեր-Ֆեխների օրենք»:

5.	Նշվածներից ո՞րն է աֆեկտի տեսակ:	5րդ հարցը Նշվածներից ո՞րն է աֆեկտի տեսակ: Ըստ թեստի պատասխանի՝ 4) պաթոլոգիկ: Այն ինչ, նշված 16 գրքերից և ոչ մեկում չի խոսվում աֆեկտի ՏԵՍԱԿների մասին, միայն Սուսաննա Փիլոսյանի "Ընդհանուր հոգեբանություն" գրքում էջ 365 ում, միայն գրված էր հետևյալ նախադասությունը՝ "Եթե հզոր պայթյուն է, բնորոշվում է որպես "պաթոլոգիկ աֆեկտ": Այնինչ, աֆեկտի այլ դրսևորման դեպքում կարող է բնորոշվել նաև "հիսթերիկ աֆեկտ":	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 365-րդ էջում նշված է. «Պայթյունի փուլին բնորոշ են չափազանց ուժեղ հույզը և անկազամկերպ գործողությունները: Աֆեկտիվ պայթյունը կարճատև է: Տեղի է ունենում գիտակցության նեղացում: Անձը ինքնատիրապետումս ու կամածին ինքնակառավարման ունակությունը կորցնում է: Աֆեկտից հետո ուժերի անկում, նույնիսկ, լիակատար անտարբերություն, քնկոտություն է արտահայտվում: Եթե հզոր պայթյուն է, բնորոշվում է որպես «պաթոլոգիկ աֆեկտ», որի դեպքում գիտակցությունը լրիվ մթագնում է, և տվյալ իրադրության մեջ տեղի ունեցած ամեն ինչ մոռացվում է»: Թեստում նշված մյուս երեք տարբերակներից որևէ մեկը (հիսթերիկ, խրոնիկ, փսիխոտիկ) աֆեկտի տեսակ չի

			հանդիսանում : Թեստի 5-րդ հարցում աֆեկտի հիմական տեսակներից (ֆիզիոլոգիական, պաթոլոգիկ, անոմալ, կումոլյատիվ) ներկայացված է միայն պաթոլոգիկ աֆեկտը, որն էլ հանդիսանում է ճիշտ պատասխան:
7.	Ո՞վ է առաջին անգամ ձևակերպել «ռեֆլեքս» հասկացությունը:	7-րդ հարցում նշված է <<Ո՞վ է ձևակերպել ռեֆլեքս հասկացություն>> և ճիշտ տարբերակ համարվել է՝ << Պրոխազկա> տարբերակը , սակայն ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Դիանա Սարգսյանի «Հոգեբանության պատմություն» գրքում հստակ ձևակերպված է , <<Դեկարտ>> տարբերակը՝ էջ 107:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 74-րդ էջում հստակ նշված է, որ Ռ. Դեկարտը տվել է ռեֆլեկտոր աղեղի սխեման, «սակայն «ռեֆլեքս» հասկացությունը ավելի ուշ՝ 18-րդ դարում, ձևակերպեց չեխ ֆիզիոլոգ Յ. Պրոխազկան»: Ռ. Դեկարտը ներմուծել է «ռեֆլեքս» հասկացությունը որպես ֆիզիկական երևույթ: Դա նշվում է նաև Դ. Սարգսյանի գրքում. «Առաջադրելով ռեֆլեքս հասկացությունը ֆիզիկայում (Դեկարտի աշխարհայացքում որոշիչ նշանակություն, այնուամենայնիվ, ուներ ոչ թե մետաֆիզիկան, այլ

			ֆիզիկան՝ բնության մասին ուսմունքը), նա փորձում էր բացատրել աշխարհի մեխանիկական շարժման բնույթը՝ ներառելով նաև կենդանի էակների շարժման խնդիրը»[էջ107-108]: Դեկարտը ներմուծել է «ռեֆլեքս» հասկացության մեխանիկական հայեցակարգը, իսկ Պրոխազկան ձևակերպել է «ռեֆլեքս» Հասկացությունը՝ որպես կենսաբանական երևույթ: Քանի որ այս հարցում ռեֆլեքսի վերաբերյալ մեխանիկական կամ կենսաբանական հայեցակարգերը չեն շեշտվել, ստացվում է, որ այս հարցի պատասխան հանդիսացող ներկայացված չորս տարբերակներից երկուսը՝ Դեկարտ, Պրոխազկա, ճիշտ են: Բոլոր այն մասնակիցները, որոնք ընտրել են Դեկարտ կամ Պրոխազկա տարբերակներից որևէ մեկը, պետք է ստանան մեկ միավոր:
16.	Նշվածներից ովքե՞ր են բիհևիորիզմի ներկայացուցիչներ:	Ս.Փիլոսյանի դասա_ գրքում Սքիները ներկայացվում է որպես բիհևորիստ,իսկ Դ.Սարգսյանի Հոգեբանության պատմության դասագրքում որպես նեոբիհևորիստ:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 105-րդ

			էջում հստակ նշված է. «XX դարի երկրորդ կեսին բիհևիորիզմի առաջատար դարձավ Բ.Սքինները»: Սարգսյան Դ. «Հոգեբանության պատմություն» ՈՒսումնական ձեռնարկ, Երևան, 2022թ., 272 էջ: Ձեռնարկի 167-րդ էջում նշված է, որ նորագույն շրջանի վարքագետներից առավել հայտնի են Սքինների և Բանդուրայի սոցիալական ուսուցման տեսությունները: Այն հանգամանքը, որ Սքինները ներկայացվում է որպես «նորագույն շրջանի վարքագետ» չի հերքում վերջինիս բիհևիրոզմի ներկայացուցիչ լինելը, առավել ևս, որ թեստում նշված սխալ տարբերակներից որևէ մեկում (Հ. Սալիվան, Ջ. Դյուի, Ա. Ադլեր, Ու. Նայսեր) նեոբիհևիրիզմի այլ ներկայացուցիչ նշված չէր:
17.	Նշվածներից որո՞նք են անձի հասունության չափանիշներ՝ ըստ	17-րդ հարցում անհրաժեշտ է նշել անձի հասունության չափանիշներն ըստ Մասլոուի:Այդ գաղափարին մենք հանդիպում ենք նշված գրականությունից միայն Ս.Փիլոսյանի գրքում ,որտեղ նշվում է միայն,որ Մասլոուն խոսել է հասուն անձի մասին,սակայն չափանիշներ չեն նշվում:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան,

	Ա. Մասլոուի: Նշել դրանց համարները:		«Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 294-րդ էջում հստակ նշված են հասուն անձի 15 հիմնական հատկանիշներն՝ ըստ Ա. Մասլոուի:
19.	Նշվածներից որո՞նք են ըմբռնման գործընթացներ: Նշել դրանց համարները:	19-րդ հարցի պատասխանը գրքում այլ էր, թեստում այլ, գրականության մեջ (Սուսաննա Փիլոսյան- Ընդհանուր հոգեբանություն էջ 154) նշվում է՝ ըմբռնման գործընթացներն են հայտնաբերումը, պատկերի ստեղծումը և ճանաչումը, իսկ թեստում ճիշտ պատասխաններն են՝ պատկերի հայտնաբերումը, պատկերի ստեղծումը, պատկերի ճանաչումը:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 154-րդ էջում հստակ նշված է. «Ըմբռնման գործընթացներն են հայտնաբերումը, պատկերի ստեղծումը և Ճանաչումը»: Նույն դասագրքի 153-րդ էջում ներկայացված է ըմբռնման սահմանումը. «Ըմբռնումը հոգեկան այն գործընթացն է, որի միջոցով արտացոլվում է մարդու վրա անմիջականորեն ազդող առարկայի, երևույթի ամբողջական պատկերը»:
20.	Որո՞նք են յոթ տարեկանի ճգնաժամի դրսևորումներն՝ ըստ Լ. Ս. Վիգոտսկու: Նշել դրանց համարները:	Որոնք են 7 տարեկանի ճգնաժամի դրսևորումներն ըստ Լ.Վիգոտսկու՝ ես նշել եմ՝ անմիջականության կորուստ,շատախոսություն,սեթևեթանք, որը համապատասխանում է Վիգոտսկու տեսությանը, հենց Վիգոտսկու բնագրում, իսկ տրված գրականության մեջ նշված է կամակորությունը,այնինչ կամակորությունը 3 տարեկանի ճգնաժամի դռսևորում է:	Խուդոյան Ս. Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները» Երևան, «Զանգակ 97», 2004թ., 248 էջ: Գրքի 43-րդ էջում հստակ նշված է. «Լ. Վիգոտսկին այս (7

		Խնդրում եմ վերանայել տվյալ հարցերը և համապատասխան փոփոխություններ կատարել:	տարեկանի) ճգնաժամի հիմնական ախտանշաններն է համարում անմիջականության, նայիվության կորուստը, կամակորությունը, սեթևեթանքը»:
21.	Նշվածներից որո՞նք են սթրեսի փուլերից: Նշել դրանց համարները:	21-րդ հարցում նշված է. <<Որոնք են սթրեսի փուլերը>> և ճիշտ պատասխան է համարվել՝ 1,2,3,5՝ հաղթահարման, սպառման, ահազանգի և դիմադրության փուլ: Ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Ս. Փիլոսյանի հեղինակային գրքից 366 էջում հստակ նշված է նշված է 3 փուլ՝տագնապի, գոյապայքարի, հյուծման:	Խանամիրյան Ի. Գևորգյան Դ. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար», ԵՕՀ հրատարակչություն, Երևան, 2014թ., էջ 72: Նշված ձեռնարկի 10-րդ էջում հստակ ներկայացված են սթրեսի փուլերը, որոնք էլ ընդգրկված են հարցի դիստրակտորներում:
23.	Նշվածներից որո՞նք են անձի ձևավորման սուբյեկտիվ պատճառներ՝ ըստ Վ. Դ. Շադրիկովի: Նշել դրանց համարները:	23-րդ հարցում նշված է <<Նշվածներից որոնք են անձի ձևավորման սուբյեկտիվ պատճառները՝ ըստ Վ.Դ. Շադիկովի: Նշել դրանք>>: Ճիշտ պատասխան է համարվել՝ 1,2,4,7 սոցիալականացում, գիտակցություն, հաղորդակցում , արժեքային համակարգ: Սակայն, տրամադրված գրականության մեջ նշվում է, որ ըստ Վ.Դ . Շադրիկովի սուբյեկտիվ պատճառներն են՝ հոգեդինամիկ հատկությունները, գիտակցություն, հոգեկան վիճակներ և արժեքային համակարգ, իսկ սոցիալականացումը համարվում • արտաքին սոցիալական ազդեցություն, իսկ հաղորդակցումը արտաքին սոցիալական գործընթաց :	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 292-րդ էջում հստակ շարադրված են անձի ձևավորման սուբյեկտիվ պատճառները՝ «գիտակցությունը, պահանջմունքները, դրդապատճառները, դիրքորոշումները, սոցիալականացումը,

		Ուստի ճիշտ պատասխաններն են՝ 5,1,3,4։ • Խնդրում եմ առաջադրանքին տրամադրել 1 միավոր	արժեքային համակարգը, հաղորդակցումը», որոնցից 4-ը ընդգրկված են եղել հարցի դիստրակտրներում։
26.	Նշված վախերից որո՞նք են 3-6 տարեկան երեխաների տարիքային վախեր՝ ըստ Ա. Ի. Զախարովի: Նշել դրանց համարները:	26-րդ առաջադրանքում ճիշտ պատասխան է համարվում 5-րդ պատասխանը, ինչի հետ համաձայն չեմ և չեմ համարել տարիքին առանձնահատուկ, որովհետև մյուսների արդյունքից առաջացած էր և ոչ պարտադիր: Առաջադրանքին տրամադրել 1 միավոր, առաջացրել տարակուսանք ինձ մոտ: Հղումը Երեխան և հոգետրավմա գրքում հեղինակ Խանամիրյան էջ 39 աղյուսակում նշվում է , որ Երեխան վախենում է մենակ մնալուց, մտերիմների մահանալուց, ինչի արդյունքում կարող են ի հայտ գալ հիվանդանալու և աղետների վախեր:	Խանամիրյան Ի. Գևորգյան Դ. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար», ԵՕՀ հրատարակչություն, Երևան, 2014թ., էջ 72: Ձեռնարկի 40-րդ էջում ներկայացված աղյուսակում 3-6 տարեկան երեխաների վախերն արտացոլող սյունակում նշված է «Երեխան վախենում է մենակ մնալուց, մտերիմների մահանալուց, ինչի արդյունքում կարող են ի հայտ գալ հիվանդանալու, աղետների վախեր»: Հիվանդանալու և աղետների վախերը հանդես են գալիս որպես այս տարիքին բնորոշ մենակ մնալու, մտերիմների մահանալու վախերի հետևանք և բնորոշ են 3-6 տարեկան երեխաներին: Հարցի շրջանակներում ներկայացված չէր որևէ այլ վախ, որը ևս բնորոշ լիներ այս տարիքի

			երեխաներին և չէր կարող որևէ շփոթության տեղիք տալ: Ա.Ի.Զախարովը այն հստակորեն առանձնացնում է որպես 3-6 տարեկան երեխաներին բնորոշ վախ:
26.	Նշված վախերից որո՞նք են 3-6 տարեկան երեխաների տարիքային վախեր՝ ըստ Ա. Ի. Զախարովի: Նշել դրանց համարները:	26-րդ հարց հարցը վերաբերվում է 3-6 տարեկանի վախերին: Հեղինակը՝ Դիանա Սարգսյան-Հոգեբանության պատմություն 9-րդ գլխում էջ 165 խոսել է վաղ տարիքին հատուկ վախերից, այնուհետև 9-րդ գլխի վերջում էջ 195 տվել է առաջարկություն ուսումնասիրել Ա. Զախարովի աշխատությունը տարիքային վախերի վերաբերյալ, սակայն հեղինակը չի արտացոլել բոլոր տարիքային վախերը մասնավորապես՝ 3-6տարեկանին, որին, որ վերաբերվում էր հարցը:	Խանամիրյան Ի. Գևորգյան Դ. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար», ԵՕՀ հրատարակչություն, Երևան, 2014թ., էջ 72: Ձեռնարկի 40-րդ էջում ներկայացված աղյուսակում 3-6 տարեկան երեխաների վախերն արտացոլող սյունակում նշված են 3-6 տարեկան երեխաների վախերը: Իսկ Ձեր նշած գրքում նման անդրադարձ ընդհանրապես չկա:
27.	Նշվածներից որո՞նք են զուգորդումների տեսակներ: Նշել դրանց համարները:	Ճիշտ է համարվել 3,4,5,6 տարբերակները՝ ընդհանրական , հուզական, առընթերություն , պատճառահետևանքային տարբերակները, սակայն առաջնորդ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Ս. Փիլոսյանի հեղինակային գրքից , որտեղ հստակ նշված է, որ ըստ դասական դասակարգման զուգորդումների տեսակներն են՝ ընդհանրական, տարբերության,համադրության,առընթերության և պատճառահետևանքային, ուստի ճիշտ պատասխաններն են 5,1,2,3,4 :	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 172-րդ էջում հստակ թվարկված են զուգորդումների տեսակները. «Զուգորդումները լինում են, նմանության,

		Խնդրում եմ առաջադրանքին տրամադրել 1 միավոր	հակադրության, առընթերության, պատճառահետևանքային, ըդհանրական, հուզական»:
28.	Ըստ Հ. Մյուրրեի, նշվածներից որո՞նք են իշխելու շարժառիթի տեսակ: Նշել դրանց համարները:	28-րդ հարցում գրված է << Ըստ Հ. Մյուրրեի նշվածներից որոնք են իշխելու շարժառիթի տեսակ: Նշել դրանց համարները>>: Ճիշտ պատասխան համարվել է՝ 1,3,5՝ նորմատիվ, պարգևատրման և ստիպողական, սակայն, հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, որտեղ հստակ նշված է, որ իշխելու շարժառիթ է մերձեցման շարժառիթը , որը ուղղված է դեպի հարաբերություններում գերակայության ցուցադրելու ցանկության , իսկ մրցակցության շարժառիթը իշխանության և գերակայության դրսևորման մրցակցային պայմաններում: Այսպիսով, ճիշտ տարբերակներն են՝ 6,3,4՝ մերձեցման, ստիպողական, մրցակցային: Խնդրում եմ առաջադրանքին տրամադրել 1 միավոր	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 290-րդ էջի երրորդ կետում հստակ նշված են իշխելու շարժառիթի տեսակները. «Իշխելու շարժառիթն ունի հետևյալ տեսակները. պարգևատրման (կանես՝ կստանաս), ստիպողական (չանես՝ վատ կլինի), նորմատիվ (պաշտոնական՝ գիտակ մարդու տեղեկատվության բնույթի իշխանություն)»:
29.	Հիշողության գործընթացներին վերաբերող պնդումներից որո՞նք ճիշտ *չեն*: Նշել դրանց համարները: ռեմինիսցենցիան անցյալի իրադրությունների և դրանց ուղեկցող հուզական ապրումների,	29-րդ հարցում նշված է ընտրել տրված պնդումներից , որոնք ճիշտ չեն և պատասխան համարվել է՝ 3,4,5 : 4-րդ պնդումը ճիշտ պնդում է, ուստի, սխալ է, այն ընտրել , որպես << ոչ ճիշտ >> պնդում, քանի որ , ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, որտեղ Ս. Փիլոսյանի հեղինակային գրքում հստակ նշված է, որ << ռեմինիսցենցիան անցյալի իրադարձությունների և դրանց ուցեկցող հուզական ապրումների, տպավորությունների վերարտադրումն է>>:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 175-րդ էջում հստակ նշված է. «Ռեմինիսցենցիան նախկինում սովորած նյութի ավելի լրիվ և պարզ վերարտադրումն է»: Իսկ

	տպավորությունների վերարտադրումն է	Խնդրում եմ առաջադրանքին տրամադրել 1 միավոր	թեստում, որպես սխալ պնդում, նշված է. «Ռեմինիսցենցիան անցյալի իրադրությունների և դրանց ուղեկցող հուզական ապրումների, տպավորությունների վերարտադրումն է»։
29.	վերարտադրումը նախկին փորձի բաղադրամասերի արդիականացման գործընթացն է	Առաջադրանք 29.2_ում ներկայացված է ոչ ամբողջական սահմանում,որն աղավաղված է դարձնում տվյալ միտքը ,և այս պնդումը ևս կարելի է դասել սխալ պնդումների շարքին:Աղբյուը՝Ս.Փիլոսյան Ընդհանուր հոգեբանություն,2023թ.,էջ175	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ։ Ձեր կողմից նշված պնդումը ճիշտ պնդում է։ Դասագրքի 175-րդ էջում հստակ նշված է, որ վերարտադրումը նախկին փորձի բաղադրամասերի արդիականացման գործընթացն է, պնդումից դուրս է բերված միայն բացահայտիչը, որտեղ ներկայացնում է, թե ինչը կարող է դիտարկվել որպես նախկին փորձի բաղադրամաս, սակայն դա ոչ մի կերպ չի աղճատում պնդման իսկությունը, մանավանդ որ տվյալ առաջադրանքում ակնհայտ սխալ պնդումներ են 1.վերհուշը տեղեկույթի պահպանման ձև է,

			2.ռեմինիսցենցիան անցյալի իրադրությունների և դրանց ուղեկցող հուզական ապրումների, տպավորությունների վերարտադրումն է, 3.ճշտությունը և տևականությունը վերարտադրման որակական հատկանիշներ են
31.	Ավազաթերապիայում Մ. Լովենֆելդի կողմից ստեղծված առաջին տեխնիկան կոչվեց «Աշխարհի տեխնիկա»:	31-րդ հարց Ավազաթերապիայում Մ. Լովենֆելդի կողմից ստեղծված առաջին տեխնիկան կոչվեց «Աշխարհի տեխնիկա»: Սա ըստ թեստի պատասխանի ճիշտ պնդում է, այնինչ Անի Ավագյանի «Ավազաթերապիա» գրքի էջ 106 ում գրված է, որ այդ տեխնիկայի անունն է «Իմ աշխարհը»	Ավագյան Ա. Մ. Ավազաթերապիա. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Տիր», 2023, 194 էջ: Ձեռնարկի 15-16-րդ էջերում նշված է. «1929 թ. Լովենֆելդը առաջին անգամ հոգեբանության անգլիական ինստիտուտի իր աշխատասենյակում երկու ցինկե սկուտեղ է դնում, որից մեկը կիսով չափ լցված էր ավազով, իսկ մյուսը՝ ջրով և ավազի հետ խաղալու զանազան ձևավոր պարագաներով:..... Խաղալիքները պահվում էին փոքրիկ պահարանում, որի ողջ պարունակությունը ստացավ ‹‹Աշխարհ›› անունը: Երեխաները ինքնաբուխ կերպով այդ անվանումը փոխանցեցին իրենց ստեղծագործություններին: Այդպես ծնվեց ‹‹Աշխարհի տեխնիկան››, որը դարձավ

			Մ. Լովենֆելդի հետազոտման առարկան»: Իսկ 106 էջից սկսած Ա. Ավագյանը ներկայացնում է իր կողմից մշակված կամ տեղայնացված տեխնիկաները, այդ թվում նաև՝ այս տեխնիկայի իր կողմից տեղայնացված տարբերակը, որը նա անվանում է «Իմ աշխարհը»:
32.	Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները: Ֆլեգմատիկի նյարդային համակարգը ուժեղ է, հավասարակշիռ, ռիգիդ:	Թեստ 2-ի 32-րդ հարցման տարբերակ 4-ի ֆլեգմատիկ տիպին վերաբերող պնդումը չեմ համարել սխալ՝ առաջնորդվելով 《 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ 》 գրքի 306-րդ էջով, որտեղ ֆլեգմատիկը բնորոշվում է՝ որպես ուժեղ, հավասարակշիռ, ռիգիդ:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Ձեր կողմից նշված պնդումը ճիշտ պնդում է: 32-րդ առաջադրանքի սխալ պնդումներն են՝ «Այն գործոնները, որոնք խթանում են մարդու մոտ սթրեսային պատասխանը, կոչվում են խնդրահարույց գործոններ: Բրոկայի կենտրոնի վնասման դեպքում մարդը չի կարողանում հասկանալ լսած բառերի իմաստը:
32.	Երևակայական պատկերների ստեղծման գործընթացում առավել կարևոր դեր ունի ձախ կիսագունդը:	ճիշտ պատասխանը՝ 137, ես նշել եմ՝ 379: Երևակայական պատկերների ստեղծման գործընթացում առավել կարևոր դեր ունի ձախ կիսագունդը: Փիլոսյանի <<Ընդհանուր հոգեբանություն>> գրքում երևակայության գործընթացի հետ կապված որևէ բան նշված չէ աջ և ձախ կիսագնդերի գործառույթների աղյուսակում:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան,

			«Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 208-րդ էջում հստակ նշված է. «Երևակայական պատկերների ստեղծման գործում առավել կարևոր դեր ունեն հատկապես աջ կիսագունդը, հիպոթալամուս-լիմբային համակարգը, որի մեջ մտնում են հիպոթալամուսը, հին կեղևի (պալեոկորտեքս) և ենթակեղևային որոշ շրջաններ»:
33.	Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները: Հոգեբանական աշխատանքում գաղտնիությունը կարող է խախտվել, երբ կա հարցում իրավական մարմինների կողմից:	33-րդ հարցում նշված է, ընտրել երեք սխալ պատասխանները : Ճիշտ պատասխան է համարվել 1,6,9: Սակայն , ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, ոտեղ նշված է, որ << Հոգեբանի գաղտնիության սկզբունքը /confidentiality/ հիմնականում պարտադիր է, սակայն անվտնագության բացառություններ կան:Օրինակ՝ եթե այցելուն վտանգ է ներկայացնում իր կամ միջավայրը նկատմամբ՝ օրինակ պատրաստվում է ինքնասպանության/վնասել իրեն/ կամ պատրաստվում է բռնություն գործադրել, սպանել ուրիշներին/ վնասել այլոց/ : Ոստի , 4-րդ տարբերակը ևս պետք է համարվի ճիշտ պատասխան, քանի որ <<սխալ պնդում է>> և քանի որ 3 պնդում ընտրելու սկզբունքը խաթարվել է և մասնագետներին ընկել են թյուրընկալման մեջ և նշել ոչ ճիշտ պատասխաններ::	Խանամիրյան Ի. «Մանկական հոգեթերապիա» ՈՒսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ» հրատ., 2016թ., 156 էջ: Գրքի 40-րդ էջում հստակ նշված են մի շարք իրավիճակներ, երբ գաղտնիությունը կարող է խախտվել, այդ թվում նաև «Երբ կա հարցում իրավական մարմինների կողմից» իրավիճակը: Ուստի, «Հոգեբանական աշխատանքում գաղտնիությունը կարող է խախտվել, երբ կա հարցում իրավական մարմինների կողմից» պնդումը ճիշտ պնդում է և չի կարող համարվել ճիշտ տարբերակ տվյալ հարցի դեպքում, երբ պետք էր ընտրել սխալ պնդումները:

34.	Երեխայի հետ թերապևտիկ աշխատանքում դիմադրություն կարող է լինել միայն երեխայի կողմից:	34- րդ հարցում նշված է' ընտրել ճիշտ պնդումները և ճիշտ պատասխան համարվել է 129,սակայն ես ընտրել եմ <<Երեխայի հետ թերապևտիկ աշխատանքում դիմադրություն կարող է լինել միայն երեխայի կողմից>> որպես ճիշտ տարբերակ ,քանի որ թերապևտը ոչ թե դիմադրում,այլ օգնում է տեսնել ու գիտակցել խնդիրը 'ըստ հոգեբանների կամավոր ատեստավորման գրականության Ի.Խանամիրյանի<<Մանկական հոգեթերապիա>>գրքի:Իսկ եթե նկատի է առնվել հոգեթերապևտիկ գործընթացում երեխայի հետ աշխատանքում փոխանցման և հակափոխանցման մասին,ուրեմն սխալ բառային ձևակերպում է եղել թեստում:	Խանամիրյան Ի. «Մանկական հոգեթերապիա» ՈՒսումնական ձեռնարկ, Երևան, «Զանգակ» հրատ., 2016թ., 156 էջ: Ձեռնարկի 108-րդ էջում հստակ գրված է. «Երեխաների հետ տարվող աշխատանքում, բացի երեխայի դրսևորած դիմադրությունից, թերապևտները հաճախ հանդիպում են նաև ընտանիքի կողմից ցուցաբերվող դիմադրության»:
34.	Տրված պնդումներից երեքը ճիշտ են: Նշել դրանց համարները: Ինքնամփոփությունը 7 տարեկանի ճգնաժամի ախտանշան է:	Նույն թեստի 34-րդ հարցի 4-րդ տարբերակը համարում եմ ճիշտ, ելնելով տարիքային հոգեբանության շրջանակներում նկարագրվող ճգնաժամային տարիքին բնորոշ դրսևորումներից, որտեղ նշվում է որ այտ տարիքին բնորոշ է ամիջականության կորուստը և որին հետևում է վարքում ինքնամփոփության դրսևորումներ:	Խուդոյան Ս. Ս. «Անձի զարգացման ճգնաժամային տարիքները» Երևան, «Զանգակ 97», 2004թ., 248 էջ: Գրքի 43-րդ էջում (յոթ տարեկանի ճգնաժամին վերաբերող ենթավերնագրի ներքո) նշված է. « Լ.Ս.Վիգոտսկին այս ճգնաժամի հիմնական ախտանշաններն է համարում անմիջականության, նաիվության կորուստը, կամակորությունը, սեթևեթանքը»: «Ինքնամփոփությունը 7 տարեկանի ճգնաժամի ախտանշան է» պնդումը սխալ պանդում է և չի

			կարող համարվել ճիշտ պատասխան:
35.	Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները: Ուսումնական հաստատության հոգեբանը կարող է հանդիսանալ կոնկրետ սովորողի ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացի համակարգող:	35-րդ հարցում նշված է , ընտրեք սխալ պնդումները և ճիշտ պատասխան է համարվել 2.5.8 ։ Սակայն , ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Սվաջյան, Ադամյան, Գարեգինյան <<Անհատական ուսուցման պլան>> ձեռնարկում նշված է, որ հոգեբանը մասնակցում է ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացին, սակայն նշված չէ , որ նա <<կարող է հանդիսանալ կոնկրետ սովորողի ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացի համակարգող>>, ուստի տարբերակ 1-ը ևս պետք է համարել ճիշտ պատասխան, քանի որ սխալ պնդում է ։ Այսպիսով ճիշտ պատասխաններն են՝ 1,2,8 և քանի որ , չի 3 պնդում ընտրելու սկզբունքը խաթարվել է և մասնագետներն ընկել են թյուրընկալման մեջ և նշել ոչ ճիշտ պատասխաններ:	Սվաջյան Ա.Հ., Ադամյան Հ.Ա., Գարեգինյան Ա.Ա., Մարգարյան Լ.Հ., Հակոբյան Լ.Գ., Հարությունյան Գ.Հ.: «Անհատական ուսուցման պլան» մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ. - Երևան: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024, 44 էջ: Ձեռնարկի 20-րդ էջում հստակ նշված է. «Ուսումնական հաստատությունում ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման աշխատանքների պատասխանատուն ուսումնական հաստատության տնօրենի տեղակալն է, իսկ կոնկրետ սովորողի ԱՈՒՊ-ի մշակման և իրականացման գործընթացի համակարգող կարող է ընտրվել ԱՈՒՊ-ի խմբի անդամներից որևէ մեկը, օրինակ՝ դասղեկը կամ ուսումնական հաստատության հոգեբանը»:

36.	Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները: Սովորաբար հետտրավմատիկ սթրեսային խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ:	36-րդ հարցում գրված է, որ պետք է ընտրել երեք սխալ պատասխանները: Ճիշտ պատասխաններ են համարվել՝ 136: Սակայն ճիշտ պատասխան է նաև 2-րդ պնդումը, քանի որ այն սխալ պնդում է: Ինքս առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Սահակյան, Կուրդովա << Մասնագիտական աշխատանք բռնության ենթարկված երեխաների հետ >> ուղեցույցում հստակ նշված է, որ << Հետտրավմատիկ սթրեսային խանգարումները երեխաների մոտ հաճախ հանդիպում են, հատկապես դժվար փորձառությունների կամ աղետների դեպքում >> , ուստի սխալ պնդում է <<Սովորաբար հետտրավմատիկ սթրեսային խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ>> ու պետք է ընտրվի ճիշտ պատասխան:Այսպիսով, ճիշտ պատասխաններն են՝ 123 :	Խանամիրյան Ի. Գևորգյան Դ. «Երեխան և հոգետրավման. ձեռնարկ աջակցող մեծահասակների համար», ԵՕՀ հրատարակչություն, Երևան, 2014թ., էջ 72: Ձեռնարկի 18-րդ էջում նշված է. «Սովորաբար հետտրավմատիկ սթրեսային խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ, սակայն ցանկացած երեխա, այսպես, թե այնպես, որոշակի հակազդում է դրսևորում» նախադասությունը, որից դուրս բերված «հետտրավմատիկ սթրեսային խանգարումները հազվադեպ են հանդիպում երեխաների մոտ» պնդումը ներկայացված է ճիշտ պնդումների շարքում, այն արտացոլում է ՀՏՍԽ-ի իրական կլինիկական տարածվածությունը, ինչի մասին խոսվում է նաև այլ գիտական գրականության մեջ: Պնդումը ճիշտ է, հիմնավորված է և չի կարող դիտարկվել որպես սխալ պնդում:

38.	Ինքնապաշտպանական պահանջմունքը դեֆիցիտար պահանջմունք է:	38-րդ հարցում նշված է ընտրել երեք ճիշտ տարբերակ և դրանք համարվել են' 135, սակայն ես առաջնորդվել եմ հոգեբանների կամավոր ատեստավորման համար տրամադրված գրականության ցանկից, մասնավորապես Ս. Փիլոսյանի հեղինակային գրքում նշված է, որ <<պահանջմունքները լինում են դեֆիցիտար և բարձրակրգ, իսկ դեֆիցիտար պահանջմունքներն են՝ սնունդ, քուն և բազմացում>>, - հետրաբար 1-ին կետը սխալ պնդում է , ուստի չի կարող համարվել ճիշտ պատասխան:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 281-րդ էջում հստակ նշված է. «Պահանջմունքների համակարգում տարբերակում ենք տարրական պահանջմունքներ, որոնք բնորոշ են նաև բարձրակարգ կենդանիներին: Դրանք կենսաբանական (սնունդ, քուն, բազմացում), ինքնապաշտպանական և կողմնորոշման պահանջմունքներն են, որոնք ստացել են «դեֆիցիտար պահանջմունքներ» անվանումը»: Ուստի թեստում նշված «Ինքնապաշտպանական պահանջմունքը դեֆիցիտար պահանջմունք է» պնդումը միանգամայն ճիշտ պնդում է:
38.	Ընդհանրացումը էական հանտկանիշների հիման վրա առարկաների կամ երևույթների խմբավորումն է մի	Թեստ 2-ի 38-րդ հարցի 4-րդ տարբերակը համարել եմ ճիշտ՝ առաջնորդվելով 《ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ》 գրքով, որի 190-րդ էջում հստակ նշվում է , որ ընդհանրացումը երկու կամ ավելի երևույթների համեմատության միջոցով ընդհանուր գծերի բացահայտման, մի խմբի մեջ միավորման և խոսքով ձևակերպելու գործընթացն է:	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան,

	ընդհանուր հասկացության մեջ:		«Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 190-րդ էջում հստակ նշված է. «Ընդհանրացումը երկու կամ ավելի երևույթների համեմատության միջոցով ընդհանուր գծերի բացահայտման, մի խմբի մեջ միավորման և խոսքով ձևակերպելու գործընթացն է»:
39.	Ավազաթերապիայում մոտիվացիոն տեխնիկաները կիրառվում են թերապևտիկ տեխնիկաներից հետո:	Այս հարցերը կամ պետք է հեռացվեն կամ պետք է տրվեն աներկբա հղումներ՝ էջի նշումով, ուղեցույցում նշված գրականությունից, որոնք հաստատում են դրանց բացարձակ ճշմարտացիությունը:	Ավագյան Ա. Մ. Ավազաթերապիա. ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, «Տիր», 2023, 194 էջ: Ձեռնարկի 97-րդ էջում նշված է. «Այն տեխնիկաները, որոնք կիրառվում են նախապատրաստական փուլի ընթացքում, այսինքն որոնցով սովորաբար սկսվում են ավազաթերապիայի հանդիպումները, կոչվում են մոտիվացիոն տեխնիկաներ:..... Առանց մոտիվացիոն տեխնիկաների կիրառման երբեք աշխատանքը չենք սկսում և չենք անցնում զարգացնող կամ թերապևտիկ տեխնիկաների կիրառմանը»:
39.	«Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են»	39-րդ առաջադրանքի պնդումների շարքից 8-րդ համարի պնդումը ունի սխալ կառուցվածք և ազդել է 39-րդ առաջադրանքի ճիշտ տարբերակները ընտելուն; Առաջարկում նեմ տվյալ 39-րդ առաջադրանքին տրամադրել 3 միավոր: Առաջադրանքը շարադրված էր հետյալով	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, Երևան,

		Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են, սակայն պետք է լիներ ըստ Հղումը ընդհանուր հոգեբանության գրքի հեղինակ Փիլոսյան էջ 275-ում նշված Չգիտակցված են հակումները, դիրքորոշումները, բարդույթները, ուղղվածությունները, մղումները:	«Զանգակ», 2023թ., 422 էջ: «Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են» պնդման մեջ առկա է վրիպում: Ըստ դասագրքի 275-րդ էջի, պետք է լինի «Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված դրդապատճառներ են», ուստի այս հարցում երեքի փոխարեն առկա է չորս սխալ պնդում: Հետևաբար, բոլոր այն մասնակիցները, ովքեր նշված սխալ պնդումներից բացի, որպես սխալ պնդում ընտրել են «Հակումները, դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են» պնդումը, բողոքարկման արդյունքում ստանում են մեկ միավոր:
39	Այցելուի հետ «Ընտանիքի նկար» թեստը կիրառելիս խորհուրդ է տրվում բացատրել, թե ինչ է նշանակում «ընտանիք»:	Այս հարցերը կամ պետք է հեռացվեն կամ պետք է տրվեն աներկբա հղումներ՝ էջի նշումով, ուղեցույցում նշված գրականությունից, որոնք հաստատում են դրանց բացարձակ ճշմարտացիությունը:	Ավանեսյան Հ.Մ. Պրոյեկտիվ մեթոդների գիտակիրառական առանձնահատկությունների համակարգումը: -Եր., ԵՊՀ հրատ., 2017, 256 էջ: Գրքի 148-րդ էջում հստակ նշված է. «Ընտանիքում փոխհարաբերությունները գնահատելու համար կարելի է գործածել

			«Ընտանիքի նկար» թեստը: Այդ դեպքում խորհուրդ չի տրվում բացատրել, թե ինչ է նշանակում «ընտանիք»: Իսկ եթե ծագում են ինչ նկարելու վերաբերյալ հարցեր, անհրաժեշտ է ևս մեկ անգամ կրկնել հրահանգը»: Ակնհայտ է, որ «Այցելուի հետ «Ընտանիքի նկար» թեստը կիրառելիս խորհուրդ է տրվում բացատրել, թե ինչ է նշանակում «ընտանիք»» պնդումը սխալ պնդում է և 39-րդ հարցի պահանջի շրջանակներում հանդիսանում է ճիշտ պատասխան:
40.	Տրված պնդումներից երեքը սխալ են: Նշել դրանց համարները: Ըստ Բ. Վ. Զեյգառնիկի, մարդն ավելի լավ է հիշում այն գործողությունը, որն ավարտին *չի* հասցրել:	Ըստ Զեյգառնիկի օրենքի մարդը ավարտված գործերը 2 անգամ ավելի հեշտ է մեռանում: Սա հոգեբանության 5 օրենքներից մեկն է ,և որպես օրենք անթույլատրելի է փոփոխության ենթարկել: Ձեր տարբերակը ձևակրեպված էր այսպես. «Ըստ Զեյգառնիկի օրենքի մարդն ավելի լավ է հիշում այն գործողությունը , որն ավարտին չի հասցրել: Այստեղ դուք ներկայացրել եք օրենքի հականիշ իմաստը , որը իմաստային առումքով նույն է , այսինքն եթե գործերը չեմ ավարտել լավ հիծում եմ , իսկ եթե ավարտել եմ մոռանում եմ , և այսպես օրենքի հակառակ իմաստը ներմուծելով դուք ոչ թե սխալ եք ներկայացրել օրենքը, այլ հակառակ իմաստով եք ներմուծել պառասքանի մեջ, որը նույնպես ճիշտ է, սակայն դուք դա որպես սխալ պատասքան եք դիտարկել, կրկին մսացած պատասխանների մեջ արհեստական շփոթ առաջացնելով: Հետևաբար պատասքան 6-ը ճիշտ պատասխան է , իսկ դուք դա ներկայացրել	Փիլոսյան Ս. Մ. «Ընդհանուր հոգեբանություն» Դասագիրք բարձրագույն ուսումական հաստատությունների համար, Երևան, «Զանգակ», 2023թ., 422 էջ: Դասագրքի 176-րդ էջում հստակ նշված է. «Բ. Վ. Զեյգարնիկը բացահայտեց հիշողության մեկ այլ օրինաչափություն, որ մարդն ավելի լավ է հիշում այն գործողությունը, որ ավարտին չի հասցրել», ուստի առաջադրանքում ընդգրկված «Ըստ Բ. Վ. Զեյգառնիկի, մարդն ավելի լավ է հիշում այն

		եք որպես սխալ ։ Հարց 40-ի բոլոր 3 պատասխաններին տալ մեկական միավոր , քանի որ Ձեր սխալի հետևանքով մնացած բոլոր պատասխանները սխալ են ընկալվել ։	գործողությունը, որն ավարտին *չի* հասցրել» պնդումը հստակ ճիշտ պնդում է։

Հոգեբանների կամավոր ատեստավորման թեստում առկա 29 հարցի կամ պնդման շուրջ ատեստավորմանը մասնակցած 82 անձի կողմից իրականացվել է բողոքարկում: 82 անձը միասին , ըստ հարցերի, ներկայացրել են 470 առարկություն, որոնք հիմնականում կրկնվում են: Մեկ անձի կողմից բողոքարկված առավելագույն հարցերի թիվը՝ 15 է, նվազագույնը՝ 1: 13 հարցի շուրջ բողոքները անընդհատ կրկնվում են

Բողոքարկման արդյունքում նպատակահարմար ենք գտնում երկու հարցի դեպքում փոխել միավորները:

- Հարց 7-րդը՝ Դեկարտ, Պրոխազկա, երկու տարբերակներն էլ համարել ճիշտ:
- Հարց 39՝ «Հակումները դիրքորոշումները, բարդույթները և մղումները չգիտակցված հակումներ են» պնդումը ևս համարել սխալ:

Այս հարցերի մասին մեր առավել մանրամասն մեկնաբանությունները ներկայացված են աղյուսակի տվյալ հարցի «Պատասխան» սյունակում: